Հիմք ընդունելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ ու 4-րդ կետերը և 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի Բաղրամյան 14 հասցեում գտնվող կենցաղի տան 3-րդ հարկի՝ 91634 դրամ սկզբնական արժեքով, 534,22 քառ. մետր մակերեսով անշարժ գույքը և դրա զբաղեցրած հողամասի բաժնային մասը հետ վերցնել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկից և ամրացնել «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին:

2. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող անշարժ գույքը՝ համաձայն հավելվածի, և դրանց զբաղեցրած հողամասերի բաժնային մասերը հետ վերցնել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմ» ու «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկներից և ամրացնել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկին:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական

գույքի կառավարման վարչության պետին՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի հետ համատեղ, սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո քառամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշումից բխող հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերն իրականացնելով համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի միջոցների հաշվին:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 16-ի «Գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» N 834-Ա որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետը:

5. Հայաստանի Հանրապետության 2017 թվականի հուլիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին անշարժ գույք ամրացնելու մասին» N 874-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխություն-ները՝

1) չեղյալ ճանաչել 1-ին, 6-րդ և 17-րդ կետերը.

2) 19-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

19.	ՀՀ Շիրակի մարզ, Աշոցքի համայնք, 4-րդ փող., 3/2	շենք	254,86	5568951.26	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմ
		պարիսպ	16,26 (35,77 խոր. մ)		

»: